# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 օգոստոսի 2024թ. թիվ 527-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 4-Ի ԹԻՎ 420-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 3-րդ մասով, հաշվի առնելով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի պարտականությունները կատարողի 05.08.2024թ. թիվ 395 գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2022 թվականի հուլիսի 4-ի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-Ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2018 թվականի հունվարի 15-ի թիվ 10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 420-Ա որոշման հավելվածի «Ախտաբանաանատոմիական ծառայություններ» բաժնում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) «4. Դիակի պահում /1 օր/» տողում «5000» թիվը փոխարինել «10000» թվով,

2) «6. Ախտաբանաբջջաբանական հետազոտություն» տողում «6000» թիվը փոխարինել «8000» թվով,

3) «Հիստոլոգիական հետազոտություն /վիրահատական և բիոպսիոն նյութեր/» տողում «8000» թիվը փոխարինել «12000» թվով,

4) «8. Դեպքերի խորհրդատվության ապահովում հեռուստաբժշկությամբ» տողում «5000» թիվը փոխարինել «10000» թվով:

5) բաժինը լրացնել նոր տողով՝

| | | |
|---|---|---|
| 9 | Դիակի հանդերձավորում, ննջատուփի մեջ տեղադրում, ձևավորում և որակի հսկողություն՝ մինչև հուղարկավորության արարողության օրը | 15 000 |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. օգոստոսի 7
ք.Վանաձոր